

Հավելված N 2  
Հայաստանի Հանրապետության  
բնապահպանության նախարարի  
2015 թ. Մայիսի 20 ի N 64-Ն հրամանի  
«Հավելված N 17  
ՀՀ բնապահպանության նախարարի 2011 թվականի  
հունվարի 14-ի N 13-Ա հրամանի

## Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) շրջակա միջավայրի պահպանության քաղաքականության վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանում է, որն ապահովում է շրջակա միջավայրի պահպանության, կայուն օգտագործման և շրջակա միջավայրի վրա ներգործությունների սահմանափակումների քաղաքականության ձևավորումը և իր իրավասությունների սահմաններում իրականացումը:
2. Սույն կանոնադրությամբ սահմանված «շրջակա միջավայր» հասկացությունը չի ընդգրկում հողերը և ընդերքը:
3. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, իրավական այլ ակտերով, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ:
4. Վարչության կանոնադրությունը, կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատում է Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարը՝ Աշխատակազմի ղեկավարի ներկայացմամբ:
5. Վարչությունը ղեկավարում է վարչության պետը:

## II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

6. Վարչությունը բաղկացած է երեք բաժիններից.

- 1) Կլիմայի փոփոխության և մթնոլորտային օդի պահպանության քաղաքականության բաժին,
- 2) Կենսաբազմազանության և կենսաանվտանգության պահպանության քաղաքականության բաժին,
- 3) Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և ջրային ռեսուրսների պահպանության քաղաքականության բաժին:

## III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

7. Վարչության հիմնական խնդիրներն են՝

- 1) Շրջակա միջավայրի պահպանության բնագավառում պետական քաղաքականության ձևավորման և դրա իրականացման սկզբունքների և ռազմավարական ուղղությունների մշակումը,
- 2) Մասնակցություն շրջակա միջավայրի՝ ջրերի, մթնոլորտի, կենդանական ու բուսական աշխարհի, վրա վնասակար ներգործությունների կանխարգելման կամ նվազեցման, ինչպես նաև բնական ռեսուրսների ողջամիտ օգտագործման, վերարտադրության, վերականգնման պետական քաղաքականության ձևավորմանը և բնագավառի պետական քաղաքականության ծրագրերի ու ռազմավարությունների մշակմանը,
- 3) Մասնակցություն շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիթորինգի չափորոշիչների և բնապահպանական վերահսկողության սկզբունքների մշակմանը,
- 4) Բնապահպանական միջոցառումների և ծրագրերի իրականացումը խթանող տնտեսական, ֆինանսական և այլ մեխանիզմների ներդրման համար վարչության իրավասություններին վերաբերող խնդիրների գծով առաջարկությունների մշակումը և դրանց ներդրման գործընթացին աջակցությունը,
- 5) Շրջակա միջավայրի պահպանության բնագավառում գիտատեխնիկական նախաձեռնությունների տեղեկատվության տրամադրման և առաջավոր տեխնոլոգիաների փոխանցման և ներդրման աջակցությունը,
- 6) Իր իրավասության սահմաններում միջազգային համագործակցության ապահովումը,
- 7) Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի բնապահպանության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման գործընթացի կազմակերպումը,
- 8) Շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության հիմնադրույթների և չափորոշիչների մշակումը:

#### IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

8. Վարչության բաժինների գործառույթներն են.

**1) Կլիմայի փոփոխության և մթնոլորտային օդի պահպանության բաժին.**

ա. կլիմայի փոփոխության մեղմացման և հարմարվողականության, ինչպես նաև մթնոլորտային օդի պահպանության բնագավառի պետական քաղաքականության ձևավորում, քաղաքականության ծրագրերի ու ռազմավարական ուղղությունների մշակում և դրանց իրականացման մոնիթորինգ,

բ. մասնակցություն Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական ծրագրերի՝ մթնոլորտային օդի պահպանության և կլիմայի փոփոխության ոլորտին վերաբերող բաժինների մշակմանը,

գ. ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայով սահմանված դրույթների և պարտավորությունների, կոնվենցիայի շրջանակներում ընդունած որոշումների, ինչպես նաև այլ մթնոլորտի պահպանության հետ առընչվող գլոբալ և տարածաշրջանային պայմանագրերով սահմանված պարտավորությունների կատարման ապահովում՝ իր լիազորությունների սահմաններում,

դ. Կլիմայի փոփոխության և մթնոլորտային օդի պահպանության կառավարման հայեցակարգի և հիմնադրույթների մշակումը և կատարելագործումը, ինչպես նաև այդ բնագավառում նորմատիվ բնույթի իրավական ակտերի մշակման վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը և իր իրավասության սահմաններում մշակումը, գործող իրավական ակտերի բարելավումը,

ե. կլիմայի և մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նորմավորման, վնասակար նյութերի և ջերմոցային գազերի պետական հաշվառման սկզբունքների ու կարգերի մշակումը,

զ. կլիմայի փոփոխության և մթնոլորտային օդի պահպանության մասով տնտեսական մեխանիզմների, վնասի հաշվարկման մեթոդների բնապահպանական վճարների դրույքաչափերի մշակման ու հասցված վնասի հաշվարկման աշխատանքներին մասնակցությունը,

է. կլիմայի փոփոխության և մթնոլորտային օդի վիճակի վրա վնասակար ներգործության և դրանց աղբյուրների բացահայտումը, ուսումնասիրությունը, ինչպես նաև մոնիթորինգի չափորոշիչների մշակումը,

ը. օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով համապատասխան վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթեր, տեղեկանքներ և այլն) ներդրմանը և դրանց միջոցով հավաքագրված տվյալների ու տեղեկությունների հիման վրա վարչական վիճակագրական ռեգիստրների վարմանը մասնակցություն՝ կլիմայի փոփոխության և մթնոլորտային օդի պահպանության մասով,

թ. մասնակցություն կլիմայի փոփոխության և մթնոլորտային օդի պահպանության վերաբերյալ միջազգային պայմանագրերի մշակման ու կնքման գործընթացներին և

միջազգային պայմանագրերով նախատեսված պարտավորությունների կատարման ապահովմանն ուղղված աշխատանքներին,

ժ. մասնակցություն կլիմայի փոփոխությանը և մթնոլորտային օդի պահպանությանը վերաբերող միջազգային ծրագրերի նախագծերի մշակմանը, ինչպես նաև նախարարություն ներկայացված պայմանագրերի ուսումնասիրման և դրանց վերաբերյալ կարծիքի տրամադրման աշխատանքներին,

ժա. կլիմայի փոփոխության և մթնոլորտային օդի պահպանության մասով շրջակա միջավայրի ազդեցության գնահատման և փորձաքննության շրջանակներում մասնագիտական եզրակացության տրամադրումը,

ժբ. բնապահպանական միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարմանն ուղղված մեխանիզմների ներդրման վերաբերյալ առաջարկությունների մշակում,

ժգ. նախարարությանը ներկայացված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ կարծիքի տրամադրում՝ կլիմայի փոփոխության և մթնոլորտային օդի պահպանության մասով,

ժդ. մասնակցություն քաղաքացիների առաջարկությունները, դիմումները, բողոքները սահմանված կարգով քննարկելու և դրանց պատասխանելու աշխատանքներին՝ մթնոլորտային օդի պահպանության և կլիմայի փոփոխության մասով,

ժե. մասնակցություն կլիմայի փոփոխության և մթնոլորտային օդի պահպանության բնագավառում պետական ծրագրերի մշակմանը և պետական պատվերի՝ սահմանված կարգով ձևավորմանը,

ժզ. մասնակցություն նախարարության տեղեկատվական քաղաքականության իրականացման և հասարակայնության հետ կապերի կազմակերպման աշխատանքներին՝ կլիմայի փոփոխության և մթնոլորտային օդի պահպանության մասով,

ժէ. նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ կլիմայի փոփոխության և մթնոլորտային օդի պահպանության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատմանը և դրա վերաբերյալ կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունների տրամադրումը:

## **2) Կենսաբազմազանության և կենսաանվտանգության քաղաքականության բաժին.**

ա. կենսաբազմազանության պահպանության և կենսաանվտանգության քաղաքականության բնագավառում պետական քաղաքականության ձևավորում, քաղաքականության ծրագրերի ու ռազմավարական ուղղությունների մշակում և դրանց իրականացման մոնիթորինգ,

բ. իրականացնում է կենսաբազմազանության պահպանության և կենսաանվտանգության քաղաքականության բնագավառում նորմատիվ բնույթի իրավական ակտերի մշակման տեխնիկական առաջադրանքների կազմումը և իր իրավասության շրջանակներում մշակումը,

գ. իրականացնում է Հայաստանի Հանրապետության բույսերի ու կենդանիների Կարմիր գրքի վարումը,

դ. մասնակցում է կենսաոռոտությունների կառավարման և կենսաբազմազանության պահպանության բնագավառում պետական ծրագրերի մշակմանը,

ե. մասնակցում է կենսաբազմազանության պահպանության և կենսառեսուրսների ողջամիտ օգտագործման ու վերականգնման տնտեսական մեխանիզմների՝ այդ թվում բնապահպանական և բնօգտագործման վճարների դրույքաչափերի մշակմանը,

զ. մասնակցում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտման հետևանքով բնությանը հասցված վնասի հաշվարկման մեթոդների մշակմանը,

է. իրականացնում է կենսաբազմազանության վիճակի պետական դիտանցի (մոնիթորինգ) իրականացման կարգերի մշակումը,

ը. իրականացնում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության շրջանակներում կենսաբազմազանության մասով մասնագիտական եզրակացությունների տրամադրումը,

թ. իր իրավասության սահմաններում մշակում է օտարաժին բուսական և կենդանական տեսակներից կենսաբազմազանության անվտանգությունն ապահովող սկզբունքներն ու մեթոդները,

ժ. մասնակցում է նախարարության տեղեկատվական քաղաքականության իրականացմանը,

ժա. մասնակցություն կենսաբազմազանության պահպանության և կենսառեսուրսների վերաբերյալ միջազգային պայմանագրերի մշակման ու կնքման գործընթացներին և միջազգային պայմանագրերով նախատեսված պարտավորությունների կատարման ապահովմանն ուղղված աշխատանքներին,

ժբ. մասնակցում է քաղաքացիների առաջարկությունների, դիմումների, բողոքների սահմանված կարգով քննարկմանը և դրանց պատասխանների պատրաստմանը,

ժգ. մասնակցում է նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ կենսաբազմազանության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատմանը և դրա վերաբերյալ կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունների տրամադրմանը,

ժդ. մասնակցում է Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական ծրագրերի՝ կենսաբազմազանության ոլորտին վերաբերող բաժինների մշակմանը,

ժե. բաժնի իրավասությունների սահմաններում իրավական ակտերի նախագծերի մշակում և նախարարությանը ներկայացված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ կարծիքի տրամադրում,

ժզ. բաժնի գործառույթներին վերաբերող իրավական ակտերի կիրառման գործընթացում թերությունների բացահայտում և բացթողումների վերացմանն ուղղությամբ իրավական ակտերի նախագծերի մշակում:

### **3) Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման և ջրային ռեսուրսների պահպանության քաղաքականության բաժին.**

ա. շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության, ինչպես նաև ջրային ռեսուրսների պահպանության և ողջամիտ օգտագործման և վերականգնման բնագավառի պետական քաղաքականության ձևավորում, ծրագրերի ու ռազմավարական ուղղությունների մշակում և դրանց իրականացման մոնիթորինգ,

- բ. շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացը կարգավորող իրավական ակտերի նախագծերի մշակումը,
- գ. շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ներկայացված նախագծերի վերաբերյալ իր իրավասության շրջանակում մասնագիտական եզրակացության տրամադրումը,
- դ. փորձաքննության ենթակա նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության չափորոշիչների մշակումը,
- ե. ջրային ռեսուրսների պահպանության ոլորտին վերաբերող իրավական ակտերի մշակումը,
- զ. ջրային ռեսուրսների վիճակի դիտանցի /մոնիտորինգ/ իրականացման կարգերի մշակումը,
- է. ջրային ռեսուրսների կադաստրների ու ռեգիստրների ստեղծման հետ կապված իրավական ակտերի և դրանց վարման կարգերի մշակումը,
- ը. շրջակա միջավայրի վրա ազդեցության և ջրային ռեսուրսների պահպանության մասով տնտեսական մեխանիզմների, վնասի հաշվարկման մեթոդների մշակման ու հասցված վնասի հաշվարկման աշխատանքներին մասնակցությունը,
- թ. օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով համապատասխան վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթեր, տեղեկանքներ և այլն) ներդրմանը և դրանց միջոցով հավաքագրված տվյալների ու տեղեկությունների հիման վրա վարչական վիճակագրական ռեգիստրների վարմանը մասնակցություն՝ շրջակա միջավայրի պահպանության մասով,
- ժ. շրջակա միջավայրի վրա ազդեցության և ջրային ռեսուրսների պահպանության ոլորտներում միջազգային ծրագրերի նախագծերի մշակման, նախարարություն ներկայացված նախագծերի ուսումնասիրման և դրանց վերաբերյալ կարծիքի տրամադրման աշխատանքներին մասնակցություն,
- ժա. նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ բնապահպանության բնագավառում կարգավորման ազգեցության գնահատումը և դրա վերաբերյալ կարգավորման ազդեցության գնահատման՝ նախարարության ամփոփ եզրակացությունների տրամադրումը,
- ժբ. բնապահպանական միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարմանն ուղղված մեխանիզմների ներդրման վերաբերյալ առաջարկությունների մշակում,
- ժգ. բաժնի իրավասությունների սահմաններում իրավական ակտերի նախագծերի մշակում և նախարարությանը ներկայացված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ կարծիքի տրամադրում,
- ժդ. բաժնի գործառույթներին վերաբերող իրավական ակտերի կիրառման գործընթացում թերությունների բացահայտում և բացթողումների վերացմանն ուղղված իրավական ակտերի նախագծերի մշակում,
- ժե. մասնակցություն Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական ծրագրերի մշակմանը:

Վ. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ,  
ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

9. Վարչությունն իր գործունեությունն իրականացնում է Աշխատակազմի հաստիքացուցակով նախատեսված կազմով:
10. Վարչության գործունեությունը համակարգում և վերահսկում է Աշխատակազմի ղեկավարը:
11. Վարչության ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է վարչության պետը:
12. Վարչության պետի և աշխատողների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների, քաղաքացիական ծառայության դասային աստիճանների հետ կապված դրույթները սահմանվում են նրանց կողմից զբաղեցվող քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով: